Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-348-27.07.2022-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Փոստային կապի մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ ՀՕ-46-Ն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել «է» կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«է) հաստատում է փոստային կապի ոլորտում մոնիթորինգի իրականացման կարգը.»:

Հոդված 2.

1. Սույն օրենքի 1-ին հոդվածում նշված համապատասխան իրավական ակտն ընդունվելու է օրենքի ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում:
2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-348-27.07.2022-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Փոստային կապի մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ ՀՕ-46-Ն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել «է» կետով՝ հետեյալ բովանդակությամբ.

«է) հաստատում է փոստային կապի ոլորտում մոնիթորինգի իրականացման կարգը.»:

Հոդված 2. ~~Եզրափակիչ եւ անցումային դրույթներ~~

1. Սույն օրենքի 1-ին հոդվածում նշված համապատասխան իրավական ակտն ընդունվելու է օրենքի ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում:

2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ « «ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-348-27.07.2022-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	**6**
«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետ	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ կետում լրացվող նոր նախադասության վերջին «:» կետադրական նշանն առաջարկում ենք փոխարինել «.» կետադրական նշանով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետ	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ կետում լրացվող նոր նախադասության մեջ «գծի» բառն առաջարկում ենք փոխարինել «գծային» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3.	**ՀՀ կառավարություն**	**Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետ**	Առաջարկում ենք պահպանել դասական թվականների գրելաձևի կանոնները և «5.1-րդ» ձեւակերպումը փոխարինել «5.1-ին» ձեւակերպմամբ:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
4.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 2-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածի վերնագիրը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

«Փոստային կապի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 2-րդ հոդված	Առաջարկում ենք 2-րդ հոդվածի վերնագիրը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: